Մուրքի մօտ կանգնած է մի պատկառելի ծերունի և նրա առաջ մի մանկահասակ պատանի, որ կարմիր ղգեստ է փոում Յիսուսի առաջ։ Ծերունին հագել է խաշտաբանման մինչև ոտները հասնող երկար վերնազգեստ, շեղակի բացուած կրծքի վերայ, ապա ուղղակի իջած մինչև ոտքերը. վերնազգեստի կտորի երկիրը դեղնաւուն է վերան ծաղիկներով, բացուածքի շրթունքները երիզուած կարմիր կտորով։ Ոտքերին կարմիր, անկրունկ կօշիկ ունի, իսկ գլխին՝ կարմիր և սպիտակ կտորից ոլորուն թեթև չալմայ, փաթոյթ կտորների ծայրերը կախուած յետևից։ Այս հագուստը շատ է յիշեցնում Դագիկ Ա. և Սմբատ Բ. ու Թուրքէն Բագրատունի թագաւորների ղգեստաւորութիւնը, առաջինը Անիում՝ Դագկաչէն տաճարի արձանի համեմատ(*), իսկ միւսները Հաղբատի արևելեան պատին, իսկ, գրեթէ, բոլորովին նման է Հեթում Սևաստոսի բժշկարանի (երես. N. 370) բժիշկների հագուստին։ Դէմքը, աչքերն ու յօնքերը կանոնաւոր, այտերի կեղրոնը թեթև կարմիր, որ մեր նկարչի սիրած ձևն է, մորուքն սպիտակ և սուր վերջաւորութեամբ։ Երկու ձեռքին բռնել է ձիթենու ճիւղեր։

Դրան չէ՛ քին, ծերունու առաջ, կանգնած է մանկահասակ պատանին. նա հագել է կանաչ և գօտևորած պարեգօտ, որ մինչև ոտներն է հասնում. հագել է կարմիր կօշիկներ։ Գլուխը բաց է, գանգուրներով ծածկուած. դիրքը քիչ կորացած, որովհետև երկու ձեռքին բռնել է մի կարմիր բաճկոն և փոում է Յիսուսի առաջ։ Իշի ոտքերի տակ փռուած է մի ուրիշ բաճկոն և ձիթենու ճիւղեր, էշը գլուխը խոնարհեցրած, հոտոտում է փռուածքը։

Յիսուս նստել է իշի վերայ, երկու ոտքերը միևնոյն կողմը դարձրած. հագել է կարմիր տունիկայ մինչև մերկ ոտները հասնող, դորա տակից մի ուրիշ նեղ թևգանիքով, որ զարդարուն է կամ ծաղկաւոր բաղուկների մօտ և միայն այդ մասն է երևում. ուսերին ձգել է և մէջքում փաթաթել՝ փէշերը կապոյտ եւ բաբակ վերնազգեստ։ Ալ ձեռքը մեկնել է և խաչակնքում է, իսկ ձախին մագաղաթի փաթոյթ ունի բռնած։ Մորուքը կարճ է և երկճիւղ, բեխերը չափաւոր, աչքերը հեռուն ուղղած, գլխի մազերը ճակատից երկուսի բաժանուած, ալ և ձախ, որ չափաւոր երկարութեամբ իջնում են մինչև ուսերը։ Գլխի շուրջը բոլորակ, դեղին, խաչազարդ մեծ նիմբուս։ Յիսուսի յետևից ընթանում են երկու հոգի, մէկը դեղին մեծ նիմբուսով եւ զորշ, ալեխառն բոլորակ միրուքով, որ Պետրոսն է, կարմիր վերնազգեստով. միւսը առանց նիմբի, սեւ մազերով և մորուքով, ձեռքը աղօթողի նման բարձրացրած, երևի, ժողովրդի ներկայացուցիչ։ Պատկերի յետևի տարածութեան երկու կողմից մի մի ձիթենի, բուները ողորկ և բարձր. երևում է, որ նկարիչը ձիթենի չէ տեսել. տաճարին մօտ ձիթենու բունին երկու ոտքով փաթաթուել է մի փոքր մարդ, դէմքը փչացած, երկու ձեռքերը տարածել է աղօթողի նման, բայց մատների մէջ ձիթենու մի մի փոքրիկ ճիւղ բռնած. նա հագել է մարմնին պլլուած բաճկոն, նեղ անդրավարտիկ եւ անկրունկ կօշիկներ։ Դէմքը փչացած է։

Նոյն ծառին՝ աւելի բարձր ճիւղերի վերայ երեում են երկու փիգուրներ. դոցանից մէկը մի ձեռքով բռնել է ձիթենու ճիւղը, միւսով տապարը ձեռքին՝ կտրատում է եւ ցած թափում. նա հագել է կարմիր բաճկոն մինչեւ ոտները հասնող, գօտեւորած, և ապա նեղ անդրավարտիկ, ներքեւի մասը սեղմ եւ եղրները զարդարուն. թեւերի վերայ բազպաններ։ Մի այլ երիտասարդ երեսը դարձրել է դէպի ձախ եւ ձեռքը մեկնած, խօսում է երկու մատաղահաս աղջիկների հետ, որոնք նոյնպէս ձեռքները նրան են մեկնել, խօսելու չարժուամով։ Մի երրորդ կին գնում է սիւնազարդ գմբեթի տակ, չէնքի վերնայարկում, ձեռքերը ծածկած վերնազգեստի փէշերով, ձիթենու ճիւղ է բռնել։ Կանանց հագուստի ամբողջութիւնը չի երեւում, բայց գլխի և կրծքի մասերը պարզ են. երկու մատաղահաս աղջիկները, որոնք խօսում են երիտասարդի հետ, գլուխներին ունին թեթև և բոլորակ գօտիկ, գլխի յետևի կողմից բարակ շղարշ ձգած,

(*) *Տես Հայուն.*, *Պատմ. Հայ Տարազին*, *Վենետիկ*, 1923, *եր.* 181 *և* 179. *այսուհետ* պատկ. 14 *և* 15։